ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արագածոտնի մարզի <<Ագարակի Տ.Թերլեմեզյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի աշխարհագրություն (11 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է 2 փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- Դիմում (Ձև1), մեկ լուսանկար՝ 3Х4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ
- <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը(առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- Հրատարակված հոդվածների ցանկ, կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- Որակավորման տարրակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 13-ից մինչև սեպտեմբերի 27-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից : Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 4-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Արագածոտն մարզի Ագարակի Տ.Թերլեմեզյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցե՝ փ.4, շ՝2:

Տեղեկությունների համար զանգահարել (093)27 93 03 հեռախոսահամարով :